

ԲԱՆԱԾՏԵՂԵԱԿԱՆ**ԿՈՄԻՏԱՍԻ ԵՐԴՈՒՄԸ**

Ինչպէս Արաքսը ըսկիզբ է առնում
 Հայկական Պարի բիւրեղ գազաբից,
 Խորունկ ձորերով անգուսպ յորձանում,
 Անառաւ, նման ամպերի կաթի, —

Այնպէս ծնում էս, երգ իմ հայրենի,
 Հայ ժողովրդի արտի սարերի
 Մուրբ աղբիւրներից հազարափնանի,
 Անապակ ինչպէս ծնունդ արեւի:

Քո ակունքներում — եւ ճին, էւ խորունկ
 Արսացուրել են էւ դարեր բազում,
 Եւ հայոց վեժի թխալերը ցատում
 Եւ սերունդների յոյսերը աստղուն:

Հայ երգ, չես հասնի, ինչպէս Մասիսի
 Ջիւղ, ամպանման ձիւնը չի հասնում,
 Հայ երգ, չես մեռնի, ինչպէս Արաքսի
 Ակունքի ջուրը բնաւ չի մեռնում:

Դու անվախճան ես, ինչպէս երկնի
 Կապոյտն անսահման փութած լեռներից,
 Քո զով անհառում իջնում ենք ծունկի,
 Գարունիդ համար ազօթում լըռին:

ԱՇՈՏ ԳՐԱՇԻ

